# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<15>> հունիսի 2026 թվականի N 1807 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՀՈՎՍԵՓ ԿՈՐՅՈՒՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՌՈՒԲԵՆ ՏԻԳՐԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի 2026 թվականի հունիսի 9-ի N 1737-Ա որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական Հովսեփ Կորյունի Սիմոնյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել Գյումրի համայնքի ղեկավարի օգնական Ռուբեն Տիգրանի Գևորգյանին՝ 2026 թվականի հունիսի 15-ից մինչև հուլիսի 16-ը ներառյալ:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովսեփ Կորյունի Սիմոնյանին և Ռուբեն Տիգրանի Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** 2026-06-15 15:54:19 GMT+4 Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» հունիսի 2026 **թվականի** N 1808Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ N 2/3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 37,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 6,75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Ղարիբ Կամոյի Հարությունյանին և Անահիտ Հովհաննեսի Չոլախյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10032026-08-0014 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոցի 3-րդ նրբանցքի N 2/3 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից 37,6 (երեսունյոթ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 6,75 (վեց ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպ, որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Ղարիբ Կամոյի Հարությունյանը և Անահիտ Հովհաննեսի Չոլախյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունները Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 2026WCZKYQ տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոցի 3-րդ նրբանցքի N 2/3 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից 37,6 (երեսունյոթ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 6,75 (վեց ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացիներ Ղարիբ Կամոյի Հարությունյանին և Անահիտ Հովհաննեսի Չոլախյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ղարիբ Կամոյի Հարությունյանին և Անահիտ Հովհաննեսի Չոլախյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական, քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<15>> հունիսի 2026 թվականի N 1809 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՍԻՐԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, << Համայնքային ծառայության մասին >> օրենքի 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի 2026 թվականի հունիսի N 1784-Ա որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի ( այսուհետ՝ բաժին ) պետի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել բաժնի գլխավոր մասնագետ Սիրանուշ Կարապետի Մամիկոնյանին՝ 2026 թվականի հունիսի 16-ից:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սիրանուշ Կարապետի Մամիկոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2026-06-15 16:20:32 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2026 **թվականի** N1810 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-52/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ« ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԻՄԻՐՅԱԶԵՎԻ ՓՈՂՈՑ 27/2 ՀԱՍՑԵՈՎ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-52/26 ծածկագրով հրատապ բաց մրցույթի միջոցով «Գյումրի համայնքի տարածքում գտնվող Տիմիրյազևի փողոց 27/2 հասցեով մարզադպրոցի վերակառուցման, արդիականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա.պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Արմինե Սարգսյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ,

բ.պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովիկ Ղազարյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անի Ավդալյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026-06-15 1[illegible]:06:15 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**2026թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» հունվարի 2026 թվականի N1811 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-52/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ « ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԻՄԻՐՅԱԶԵՎԻ ՓՈՂՈՑ 27/2 ՀԱՍՑԵՈՎ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ » ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով"

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-52/26 ծածկագրով հրատապ բաց մրցույթի միջոցով « Գյումրի համայնքի տարածքում գտնվող Տիմիրյազևի փողոց 27/2 հասցեով մարզադպրոցի վերակառուցման, արդիականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան–Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2)Դմիտրի Մանվելյան –Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3)Կարեն Կարապետյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

4) Աստղիկ Խաժակյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

5)Հրաչիկ Վարդանյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Հանձնաժողովի քարտուղար՝

6)Անի Ավդալյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2026-01-15 14:06:53 GMT+4
Ստորագրված է ԷՀԵՆԳ-ի կողմից

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» հունիսի 2026 թվականի № 1812Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 392.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0426-0001-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1242-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Թետչերի փողոց, 3-րդ նրբանցքի հարևանությամբ գտնվող 392.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մ. Թետչերի փողոց, 3-րդ նրբանցք, 24/1 հողամաս**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
/փոխարինող/

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2026 **թվականի** N 1813 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N 1747-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի Մադոյան փողոց N 338/1 հասցեի հողամասի մակերեսի չափը ճշտելու, հողամասի տեղադիրքը եվ հատակագիծը հաստատելու մասին» N 1077-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել թույլ տրված վրիպակի պատճառով:
Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի Մադոյան փողոց N 338/1 հասցեի հողամասի մակերեսի չափը ճշտելու, հողամասի տեղադիրքը եվ հատակագիծը հաստատելու մասին» N 1747-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1)Նախաբանում, որոշման 1-ին կետում «Ներսիսյաններին» բառը փոխարինել «Սարգսյաններին» բառով:
   2)Որոշման 2-րդ կետում «Ներսիսյանին» բառը փոխարինել «Սարգսյանին» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ներսիկ Կարլենի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-06-15 12:13:11 GMT+4
Հաստատված է ԷՍԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«15» հունվարի 2026 **թվականի** N 1814-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍՏԵՓԱՆ ՌԱՖԻԿԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՌՈՄԱՆ ՀԵՆՐԻԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ 27 ԿՈՐ ՓՈՂՈՑԻ N 38 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 25,12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 ԲԱՑՎԱԾՔԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 ԴՈՒՌՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 358,45 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Ստեփան Ռաֆիկի Նիկողոսյանին և Ռոման Հենրիկի Բարսեղյանին պատկանող (հիմք՝ բնակելի տան տեխնիկական անձնագիր, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2025 թվականի դեկտեմբերի 02-ին) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի 27 կոր փողոցի N 38 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ն ինքնակամ կառուցված է 25,12 (քսանհինգ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ բացված է 1 (մեկ) բացվածք, ինքնակամ փակված է 1 (մեկ) դուռ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2026WWB4K2 ծածկագրով և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 358.45 (երեք հարյուր հիսունութ ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա 111,34 (մեկ հարյուր տասնմեկ ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Ռոման Հենրիկի Բարսեղյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 կետի, 18-րդ կետի դ. ենթակետի, 22.1-րդ կետի, հիմք ընդունելով քաղաքացի Ռոման Հենրիկի Բարսեղյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի հունվարի 29-ին N 1078 թվագրմամբ),

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Ստեփան Ռաֆիկի Նիկողոսյանին և Ռոման Հենրիկի Բարսեղյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի 27 կոր փողոցի N 38 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 25,12 (քսանհինգ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1 (մեկ) բացվածքը, ինքնակամ փակված 1 (մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 4632 (չորս հազար վեց հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Քաղաքացիներ Ստեփան Ռաֆիկի Նիկողոսյանին և Ռոման Հենրիկի Բարսեղյանին պատկանող Գյումրի քաղաքի 27 կոր փողոցի N 38 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, սահմանված չափից ավել օգտագործվող, 40,13 (քառասուն ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Ստեփան Ռաֆիկի Նիկողոսյանին և Ռոման Հենրիկի Բարսեղյանին, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը 274248 (երկու հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Ճանաչել քաղաքացիներ Ստեփան Ռաֆիկի Նիկողոսյանի (ծնված 1957 թվականի հոկտեմբերի 12-ին) և Ռոման Հենրիկի Բարսեղյանի (ծնված 1979 թվականի օգոստոսի 11-ին) սեփականության իրավունքը իրենց պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի 27 կոր փողոցի N 38 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 300,0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա 111,34 (մեկ հարյուր տասնմեկ ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ:

4. Ճանաչել քաղաքացիներ Ստեփան Ռաֆիկի Նիկողոսյանի (ծնված 1957 թվականի հոկտեմբերի 12-ին), Ռոման Հենրիկի Բարսեղյանի (ծնված 1979 թվականի օգոստոսի 11-ին) և ընդհանուր բակում առկա մյուս բոլոր համասեփականատերերի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը իրենց պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի 27 կոր փողոցի N 38 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող սահմանազատված անկառուցապատ 18,32 (տասնութ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:
5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ստեփան Ռաֆիկի Նիկողոսյանին և Ռոման Հենրիկի Բարսեղյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական, քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2026 **թվականի** N 1815 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 22Ա ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 28,67 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 20,48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 18,15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ, 8,19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 6,54 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 22ա հասցեի շենքի հարևանությամբ 28,67 (քսանութ ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 20,48 (քսան ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 18,15 (տասնութ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակ, 8,19 (ութ ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 6,54 (վեց ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ շինություն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Սոս Գուրգենի Մադոյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 2026MX58LG տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 22ա հասցեի շենքի հարևանությամբ 28,67 (քսանութ ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և դրա վրա ինքնակամ կառուցված 20,48 (քսան ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 18,15 (տասնութ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը, 8,19 (ութ ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 6,54 (վեց ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Սոս Գուրգենի Մադոյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սոս Գուրգենի Մադոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական, քաղաք Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» հունիսի 2026 թվականի №1816 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 01-Ի №1672-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1217-2026 զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 01-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Տեր-Գաբրիելյան փողոցի 1-ին փակուղու հարևանությամբ գտնվող 119,95 քառակուսի մետր մակերեսով հողամասին համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №1672-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) վերնագրում և որոշման կայացման մեջ **«119,95»** թիվը փոխարինել **«21,61»** թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունիսի 2026 թվականի N 1817-Ա

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ ՏՐՎԱԾ N79/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սեդա Ռաֆայելյանին Գյումրի քաղաքի Արագածի փողոց 8/8 հասցեում առևտրի և սպասարկման օբյեկտի նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2023 թվականի մայիսի 2-ին տրվել է N79/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2023 թվականի մայիսի 2-ին տրված N79/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սեդա Ռաֆայելյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2026-06-16 09:27:54 GMT+4
Հաստատված է ԷՈՒՆԳ-ի կողմից

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 **թվականի** N 1818 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԵՊՐԱՔՍԻ ԲԵԼԱՋԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ (1/2 ՄԱՍ) ԵՎ ԼԵՎՈՆ ՀԱԿՈԲԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ (1/2 ՄԱՍ) ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 25 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 44,4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ 1 ԴՈՒՌԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ 1 ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Եպրաքսի Բելազի Ղազարյանին (1/2 մաս) և Լևոն Հակոբի Ղազարյանին (1/2 մաս) ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2025 թվականի սեպտեմբերի 17-ին N 4616, 4618) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գևորգյան փողոցի N 25 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ն ինքնակամ կառուցված է 44,4 (քառասունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություն, ինքնակամ պատուհանի է ձևափոխված 1 (մեկ) դուռ, ինքնակամ բացվածքի է ձևափոխված 1 (մեկ) պատուհան, որը հաշվառված է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2026MTBJFG ծածկագրով:

Քաղաքացի Եպրաքսի Բելազի Ղազարյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի, 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Եպրաքսի Բելազի Ղազարյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի հունիսի 09-ին N 8328 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Եպրաքսի Բելազի Ղազարյանին (1/2 մաս) և Լևոն Հակոբի Ղազարյանին (1/2 մաս) ժառանգության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գևորգյան փողոցի N 25 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 44,4 (քառասունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունը, ինքնակամ պատուհանի ձևափոխված 1 (մեկ) դուռը, ինքնակամ բացվածքի ձևափոխված 1 (մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 3938 (երեք հազար ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Եպրաքսի Բելազի Ղազարյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական, քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 **թվականի** N 1819 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՂԱՐԻԲ ԿԱՄՈՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆԵՍԻ ՉՈԼԱԽՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ N 2/3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 154,1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ, 63,1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 2 ԴՈՒՌԸ, 2 ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Ղարիբ Կամոյի Հարությունյանին և Անահիտ Հովհանեսի Չոլախյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10032026-08-0014 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոցի 3-րդ նրբանցքի N 2/3 հասցեի բնակելի տան օրինական հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 154,1 (մեկ հարյուր հիսունչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի, 63,1 (վաթսուներեք ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինություններ, ինքնակամ բացված է 2 (երկու) դուռ, 2 (երկու) պատուհան, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2026QKMUJL ծածկագրով:

Քաղաքացի Ղարիբ Կամոյի Հարությունյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի, 22-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Ղարիբ Կամոյի Հարությունյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի մայիսի 21-ին N 7459 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Ղարիբ Կամոյի Հարությունյանին և Անահիտ Հովհանեսի Չոլախյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոցի 3-րդ նրբանցքի N 2/3 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 154,1 (մեկ հարյուր հիսունչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի, 63,1 (վաթսուներեք ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունները, ինքնակամ բացված 2 (երկու) դուռը, 2 (երկու) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 602770 (վեց հարյուր երկու հազար յոթ հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ղարիբ Կամոյի Հարությունյանին և Անահիտ Հովհանեսի Չոլախյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական, քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունիսի 2026 **թվականի** N 1820 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀՌԻՓՍԻԿ ԼՅՈՎԻԿԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ N 10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 46,09 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 ԴՈՒՌԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ 1 ԴՈՒՌՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Հռիփսիկ Լյովիկի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 0232721 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոցի 5-րդ նրբանցքի N 10 հասցեի բնակելի տան օրինական հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 46,09 (քառասունվեց ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություն, ինքնակամ փակված է 1 (մեկ) դուռ, ինքնակամ պատուհանի է ձևափոխված 1 (մեկ) դուռ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023JT6PFH ծածկագրով:

Քաղաքացի Հռիփսիկ Լյովիկի Բադալյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի, 22-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Հռիփսիկ Լյովիկի Բադալյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի մայիսի 19-ին N 7284 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Հռիփսիկ Լյովիկի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոցի 5-րդ նրբանցքի N 10 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 46,09 (քառասունվեց ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը, ինքնակամ փակված 1 (մեկ) դուռը, ինքնակամ պատուհանի ձևափոխված 1 (մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 154177 (մեկ հարյուր հիսունչորս հազար մեկ հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հռիփսիկ Լյովիկի Բադալյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանիցօրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական, քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 **թվականի** N 1821 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ N 10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ 5,64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 5,64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 3,81 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոցի 5-րդ նրբանցքի N 10 հասցեի բնակելի տանը կից 5,64 (հինգ ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 5,64 (հինգ ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 3,81 (երեք ամբողջ ութսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Հռիփսիկ Լյովիկի Բադալյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 2023UNY5FD տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոցի 5-րդ նրբանցքի N 10 հասցեի բնակելի տանը կից 5,64 (հինգ ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 5,64 (հինգ ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 3,81 (երեք ամբողջ ութսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Հռիփսիկ Լյովիկի Բադալյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հռիփսիկ Լյովիկի Բադալյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական, քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 **թվականի** N 1822 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍԻ ՄՆՈՅԱՆԻՆ (1/2 ՄԱՍ), ԳՐԻԳՈՐ ՍՈՒՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ (1/6 ՄԱՍ), ԷՄՄԱ ՍՈՒՐԻԿԻ ՇԱՂՈՅԱՆԻՆ (1/6 ՄԱՍ) ԵՎ ՌՈՒԲԵՆ ՍՈՒՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ (1/6 ՄԱՍ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂՅՈՒՍԻ ՓՈՂՈՑ № 29 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 92.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Մարգարիտ Սարգսի Մնոյանին (1/2 մաս), Գրիգոր Սուրիկի Խաչատրյանին (1/6 մաս), Էմմա Սուրիկի Շաղոյանին (1/6 մաս) և Ռուբեն Սուրիկի Խաչատրյանին (1/6 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության վկայագրեր տրված 2025 թվականի հունիսի 12-ին N 399) Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց № 29 հասցեի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը հետո ինքնակամ կառուցվել է 70.95 (յոթանասուն ամբողջ իննսունինիգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, իսկ 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 23.42 (քսաներեք ամբողջ քառասուներկու հարյուրերրոդական) քառակուսի մետր արտաքին ((21.28 քսանմեկ ամբողջ քսանութ հարյուրերրոդական) քառակուսի մետր ներքին մակերեսով):

Քաղաքացի Էմմա Սուրիկի Շաղոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026B2UW3W ծածկագրով մուտքագրման տեղեկանքը և քաղաքացի Էմմա Սուրիկի Շաղոյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հունիսի 24-ին № 8637 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Մարգարիտ Սարգսի Մնոյանին (1/2 մաս), Գրիգոր Սուրիկի Խաչատրյանին (1/6 մաս), Էմմա Սուրիկի Շաղոյանին (1/6 մաս) և Ռուբեն Սուրիկի Խաչատրյանին (1/6 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց № 29 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 70.95 (յոթանասուն ամբողջ իննսունինիգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Քաղաքացիներ Մարգարիտ Սարգսի Մնոյանին (1/2 մաս), Գրիգոր՝Սուրիկի Խաչատրյանին (1/6 մաս), Էմմա Սուրիկի Շաղոյանին (1/6 մաս) և Ռուբեն Սուրիկի Խաչատրյանին (1/6 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց № 29 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 23.42 (քսաներեք ամբողջ քառասուներկու հարյուրերրոդական) քառակուսի մետր արտաքին ((21.28 քսանմեկ ամբողջ քսանութ հարյուրերրոդական) քառակուսի մետր ներքին մակերեսով) մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 39181 (երեսունինը հազար մեկ հարյուր ութսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Մարգարիտ Սարգսի Մնոյանին, Գրիգոր Սուրիկի Խաչատրյանին, Էմմա Սուրիկի Շաղոյանին և Ռուբեն Սուրիկի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«16» հունիսի 2026 **թվականի** N 1823 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՍԻ ԿՈՄԲԻՆԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՇԱՐՔ № 15/4 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 33.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (25.91 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Ալվարդ Զավենի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ սեփականության իրավունքի վկայագիր տրված 2025 թվականի հուլիսի 04-ին N 9118 և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրված 2025 թվականի հուլիսի 04-ին N 9119) Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի Մսի Կոմբինատ 2-րդ շարք № 16 հասցեի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 6.76 (վեց ամբողջ յոթանասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, իսկ 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 33.26 (երեսուներեք ամբողջ քսանվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (19.15 (տասնինն ամբողջ տասհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով) բնակելի շինություններ:

Քաղաքացի Ալվարդ Հակոբյանի լիազորված անձ Էմմա Վարդանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026LFPLQ7 ծածկագրով մուտքագրման տեղեկանքը և քաղաքացի Ալվարդ Հակոբյանի լիազորված անձ Էմմա Վարդանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի փետրվարի 09-ին № 1655 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Ալվարդ Զավենի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գյումրի քաղաքի Մսի Կոմբինատ 2-րդ շարք № 16 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 6.76 (վեց ամբողջ յոթանասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական:
2. Քաղաքացի Ալվարդ Զավենի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գյումրի քաղաքի Մսի Կոմբինատ 3-րդ շարք № 16 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 33.26 (երեսուներեք ամբողջ քսանվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (19.15 (տասնինն ամբողջ տասհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով) մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 47295 (քառասունյոթ հազար երկու հարյուր իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սահմանված կարգով քաղաքացի Ալվարդ Զավենի Հակոբյանին տրամադրել անավարտ շինությունը ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք, անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներով:
5. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Սույն որոշումը ուժի մեջ է քաղաքացի Ալվարդ Զավենի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

**«16» հունիսի 2026 թվականի N 1824 Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ՄԻՇԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ N 150/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 92,77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 33,85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Գրիգոր Միշայի Սարգսյանին ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր գրանցված գրանցամատյանում թիվ՝ 1916, ժառանգական գործ N 473) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N 150/1 հասցեի հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 92,77 (իննսուներկու ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2026SF8TA2 ծածկագրով, իսկ օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 33,85 (երեսուներեք ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որը նշված է բնակելի տան տեխնիկական անձնագրում:

Քաղաքացի Գրիգոր Միշայի Սարգսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 22.1-րդ կետի, և հիմք ընդունելով քաղաքացի Գրիգոր Միշայի Սարգսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի մայիսի 19-ին N 7280 թվագրմամբ),

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Գրիգոր Միշայի Սարգսյանին ժառանգության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N 150/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 92,77 (իննսուներկու ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացի Գրիգոր Միշայի Սարգսյանի (ծնված 1972թվականի սեպտեմբերի 04-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N 150/1 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 33,85 (երեսուներեք ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գրիգոր Միշայի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

Восстановимая подпись

X

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունիսի 2026 **թվականի** N 1825Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԱՐՏՅՈՄԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ N 119 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 148.03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Գևորգ Արտյոմի Մանուկյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ N 8898 տրված 2024 թվականի նոյեմբերի 8-ին) Գյումրի քաղաքի 26 Կոմիսարների փողոց N 119 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 148.03 (մեկ հարյուր քառասունութ ամբողջ երեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Գևորգ Արտյոմի Մանուկյանի լիազորված անձ Իրինա Արամայիսի Եղիազարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի նրա վրա առկա շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և հաշվի առնելով քաղաքացի Գևորգ Արտյոմի Մանուկյանի լիազորված անձ Իրինա Արամայիսի Եղիազարյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի դեկտեմբերի 17-ին N 19813 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Ճանաչել քաղաքացի Գևորգ Արտյոմի Մանուկյանի (ծնված 1977 թվականի օգոստոսի 17-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի 26 Կոմիսարների փողոց N 119 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 148.03 (մեկ հարյուր քառասունութ ամբողջ երեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Արտյոմի Մանուկյանի լիազորված անձ Իրինա Արամայիսի Եղիազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2026-06-16 09:44:19 GMT+4
Հաստատված է ԷՀՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*«16» հունիսի 2026 թվականի N1826-Ա*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ N152/176 ՀԱՍՑԵԻ 230.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 125.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (104.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Արևելյան փողոց N152/176 հասցեում 230.0 (երկու հարյուր երեսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասում, ինքնակամ կառուցված է 125.5 (հարյուր քսանհինգ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (104.5(հարյուր չորս ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Երազիկ Սուքիասյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026B9CSNV ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Արևելյան փողոց N152/176 հասցեում 230.0 (երկու հարյուր երեսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասում, ինքնակամ կառուցված 125.5 (հարյուր քսանհինգ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (104.5(հարյուր չորս ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Երազիկ Սուքիասյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Երազիկ Սուքիասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-06-16 10:18:27 GMT-4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2026 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026

թվականի N1824-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ N17 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 159.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 205.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N17 հասցեում 205.5(երկու հարյուր հինգ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառուցվել է 159.2 (հարյուր հիսունինը ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացիներ Արա Մերուժանի Կարապետյանը և Արմեն Աղասու Կարապետյանը:

Քաղաքացիներ Արա և Արմեն Կարապետյանների լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով քաղաքացիներ Արա և Արմեն Կարապետյանների լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N8121 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել քաղաքացիներ Արա Մերուժանի Կարապետյանի (ծնված 1975 թվականի ապրիլի 10-ին) և Արմեն Աղասու Կարապետյանի (ծնված 1971 թվականի սեպտեմբերի 14-ին) սեփականության իրավունքը Աբովյան փողոց N17 հասցեում գտնվող 205.5(երկու հարյուր հինգ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 159.2 (հարյուր հիսունինը ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններից 154.8(հարյուր հիսունչորս ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան նկատմամբ:
2. Նշված տան բակում գտնվող 4.4 (չորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինությունները ենթակա են քանդման:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Արա և Արմեն Կարապետյանների լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-06-16 10:24:45 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունիսի 2026 **թվականի** N 1828 Ա

**«ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 188 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հունիսի 03-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հունիսի 10-ին 8412-2026 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի տեղադրված առկա լեդ-էկրանի վրա ցուցադրել գովազդային տեսահոլովակներ՝ ընդհանուր 47,6 քմ մակերեսով:

2"Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի հունիսի 30-ը:

3"Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Աշոտ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-06-16 ... GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2026թ. ք. Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 թվականի N 1829-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑԻ N 5/3 ՀԱՍՑԵԻ 14,41 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ 15,83 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 5 շենք N 14
հասցեի բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Էմիլ Ալեքսանի Էլյանին
(հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07092021-08-0010 վկայական):
Քաղաքացի Էմիլ Ալեքսանի Էլյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի
համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 5 շենք N 14 հասցեի բնակարանին հարակից,
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով
պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15082013-08-0003
վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի N 5/3
հասցեի 14,41 (տասնչորս ամբողջ քառասունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով առևտրի
սրահը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 15,83 (տասնհինգ ամբողջ տասներեք
հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր
օգտագործման գործառնական նշանակության հողամասը վարձակալության տրամադրելու խնդրանքով:
Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, շինությունը և հողամասը որպես առանձին գույքային
միավոր հնարավոր չէ տրամադրել մրցույթով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության
2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 4-րդ բաժնի 34.2-րդ, 35-րդ
կետերի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ
կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու
2026 թվականի ապրիլի 13-ի N 75-Ա որոշումը և քաղաքացի Էմիլ Ալեքսանի Էլյանի դիմումը (մուտքագրված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2025 թվականի
օգոստոսի 05-ին N 11068 թվագրմամբ)՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի N 5/3 հասցեի
14,41 (տասնչորս ամբողջ քառասունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով առևտրի
սրահը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 15,83 (տասնհինգ ամբողջ
տասներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային
նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 10 (տասը) տարի
ժամկետով ուղղակի վարձակալության տրամադրել տվյալ շինությունը իրականացրած քաղաքացի Էմիլ
Ալեքսանի Էլյանին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության և հողամասի ուղղակի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 300000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին):
4. Անշարժ գույքի վարձակալության պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Էմիլ Ալեքսանի Էլոյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշման ուժի մեջ է մտնում քաղաքացի Էմիլ Ալեքսանի Էլոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026-06-16 10:20:29 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«16» հունիսի 2026 թվականի N 1830 Ա

## «ԻՄԻՋ Մ.Գ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով «Իմիջ Մ.Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հունիսի 03-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հունիսի 11-ին 8522-2026 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Իմիջ Մ.Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի տարածքում տեղադրված առկա վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի պաստառ ընդհանուր 259,2 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Իմիջ Մ.Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Աշոտ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-06-16 10:44:58 GMT+4
Հաստատված է ԷՀԿՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Գյումրի համայնքի

ղեկավարի պաշտոնակատար

2026 թ. հունվարի 16

N 1830 որոշման

# ՑՈՒՑԱԿ

## <<ԻՄԻՋ Մ. Գ.>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

| Հ/Հ | ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ | Քանակ | (քառ. մ) |
|---|---|---|---|
| 1 | Երևանյան խճուղի, խաչքարի մոտ, Գարեջուր | 1 | 18 |
| 2 | Խորենացի- Մայիսյան խաչմերուկ, Ֆասթ բանկ | 2 | 36 |
| 3 | Գ. Նժդեհ գուլպայի ֆաբրիկայի մոտ, Յուքոմ | 1 | 18 |
| 4 | Գորկու փողոց, Խաղաղության հրապարակ, Արարատ բանկ | 1 | 18 |
| 5 | Գորկու փողոց Թիմ-ի դիմաց, Ֆամի գրուպ | 2 | 36 |
| 6 | Սայաթ-Նովա Ակադեմիայի դիմաց, Իդեալ համակարգ | 1 | 18 |
| 7 | Սայաթ-Նովա , Իդրամ | 2 | 36 |
| 8 | Սայաթ-Նովա 7, Սարդ | 1 | 18 |
| 9 | Սայաթ-Նովա 7, Յուքոմ | 1 | 18 |
| 10 | Վարդանանց հրապարակ 4 սքրոլլեր 8կողմ, Իդրամ | 8 | 17,28 |
| 11 | Ռիժկովի փողոց, 6 սքրոլլեր, յուքոմ | 12 | 25,92 |
| | **Ընդամենը** | 32 | 259,2 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 **թվականի** N 1831-Ա

**«ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հունիսի 03-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հունիսի 11 -ին 8523-2026 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղադրված առկա վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի պաստառներ ընդհանուր 426 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Աշոտ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026.06.16 10:49:18 GMT+4
Հավաստված է ԷՀԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026թ. ք. Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Գյումրի համայնքի

ղեկավարի պաշտոնակատար

2026 թ. հունիսի 16

N 1831 որոշման

ՑՈՒՑԱԿ

<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

| Հ/Հ | ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ | Քանակ | (քառ. մ) |
|---|---|---|---|
| 1 | Երևանյան խճ., Արարատ բանկ | 1 | 18 |
| 2 | Երևանյան-Գ. Նժդեհի խչմ., , Իդեալ համակարգ | 1 | 18 |
| 3 | Խաղաղության օղակ-Հաղթանակի խչմ., ՋՋ | 1 | 18 |
| 4 | Խրիմյան հայրիկ-Անկախության խչմ., Արարատ բանկ | 1 | 18 |
| 5 | Գ. Նժդեհի փող., մարզպետարանի դիմաց, Էվոկա բանկ | 2 | 36 |
| 6 | Սայաթ-Նովա փ.,20 կողմ, լայթբոքս, Իդրամ | 20 | 50 |
| 7 | Գ. Նժդեհի փող.. Գյումրի հյուրանոցի դիմաց, Դիագեն | 2 | 36 |
| 8 | Գ. Նժդեհի փող., Իսուզ հյուրանոցի դիմաց, Ցիտո | 1 | 18 |
| 9 | Գ. Նժդեհի փող., 5/17 , Էկոսենս | 2 | 36 |
| 10 | Պ. Սևակ 9, Յուքոմ | 1 | 18 |
| 11 | Գ. Նժդեհի 1, Իզի վալետ | 1 | 18 |
| 112 | Գ. Նժդեհի 1, ԱԲՍ ՄՈՏՈՐՍ | 1 | 18 |
| 13 | Սայաթ-Նովա 6/1, ԿՖՍ | 2 | 36 |
| 14 | Երևանյան կամուրջ , Տիգաշեն | 2 | 88 |
| | **Ընդամենը** | **38** | **426** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 թվականի N1832Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈւ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով դպրոցական պայուսակների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ռուբեն Գևորգյան – համայնքի ղեկավարի օգնական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

4) Վարդան Ալթունյան - Գյումրի համայնքի ներդրումային ծրագրերի փորձագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 **թվականի** N 1833 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով դպրոցական պայուսակների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝
ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Անդրանիկ Մադոյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Ռաֆայել Անանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի պահեստապետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2026-06-16 15:36:36 GMT+4
Համաձայնված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«16» հունիսի 2026 թվականի №1834-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի №1759–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1259-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 10-ի №1759–Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված ավտոտնակին, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Գարեգին Ա-ի փողոց, 10/8 ավտոտնակ**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 թվականի № 1835-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 09-Ի №1748-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ՀԱՐԹԱԿԻՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1239-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 09-ի №1748-Ա որոշմամբ համայնքային սեփականություն համարված հարթակին և դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Վ. Տերյան փողոց, 99/14 շինություն**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
/փոխարինող/

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 թվականի № 1836-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 32 ԴՈՍ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 36.05 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1241-2026 թվագրմամբ), շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց 32 դոս 4 հասցեում գտնվող 36.05 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով համայնքապատկան բնակարանին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ա. Շիրակացու փողոց, 32 շենք, 4 բնակարան**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

mID

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 թվականի № 1837Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 389.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0426-0001-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1244-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Թետչերի փողոց, 3-րդ նրբանցքի հարևանությամբ գտնվող 389.5 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0426-0001-ից) տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մ. Թետչերի փողոց, 3-րդ նրբանցք, 22 հողամաս**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2026-06-16 11:20:30 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2026 թվականի №1838-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 09-Ի №1730-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1233-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 09-ի №1730-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի շինություններին, դրանց կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հ. Ղանդիլյան փողոց, 9/6 բնակելի տուն**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի **2026 թվականի №1839Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀՆՈՑԱՎԱՆԻ 5-ՐԴ ՇԱՐՔ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԻԱ ՆԻԿՈԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Լիա Նիկոյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №8570-2026 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հնոցավանի 5-րդ շարք 1 հասցեում գտնվող ժառանգության իրավունքով քաղաքացի Լիա Նիկոյանին պատկանող բնակելի տունը վերահասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հնոցավանի 5-րդ շարք, 1/1 բնակելի տուն**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լիա Նիկոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հունիսի 2026 թվականի N 1840-Լ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԽՄԲԻ 1-ԻՆ ԵՆԹԱԽՄԲԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի <<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 27-Ն հրամանով հաստատված կարգի 15-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 1-ին ենթախմբի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) 2026 թվականի հուլիսի 24-ին, ժամը 11:00-ին ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին.

1) օրենքով սահմանված կարգով՝

ա. կազմակերպել և իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները,

բ. սահմանված կարգի համաձայն ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթի վերաբերյալ հայտարարության հրապարակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ 2026-06-17 15:32:15 GMT+4 Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից mID Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի փոխարինողի
2026 թվականի հունիսի 17-ի N 1840 -Լ որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի ներքոգրյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

| N | Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը | Պաշտոնի անձնագրի ծածկագիր | Նշված թափուր պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների նկարագիրը | Նշված թափուր պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները | Պահանջվող փաստաթղթերը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ | 3.1-36 | Բաժնի առաջատար մասնագետը՝<br>1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,<br>2) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը,<br>3) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին,<br>4) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,<br>5) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար,<br>6) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան,<br>7) մասնակցում է Հայաստանի Հանրապետության և Գյումրի քաղաքի տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպման համար անրաժեշտ աշխատանքներին,<br>8) մասնակցում է ազգային արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանն աջակցման համար անհրաժեշտ աշխատանքներին,<br>9) մասնակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության աջակցման համար անհրաժեշտ աշխատանքներին,<br>10) միջոցառումներ է ձեռնարկում համայնքում գրադարանային գործի բարելավման ուղղությամբ, մասնակցում է ոլորտում իրականացվող աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ աշխատանքներին, | Բաժնի առաջատար մասնագետը՝<br>1) ունի առնվազն միջնակարգ կրթություն.<br>2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գնումների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին», «Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,<br>3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,<br>4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:<br>5) Առանց աշխատանքային ստաժի և փորձի: | **Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝**<br>1) գրավոր դիմում /ձևը լրացվում է տեղում/.<br>2) առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը.<br>3) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.<br>4) հայտարարություններ /լրացվում են տեղում/.<br>5) 1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի.<br>6) անձնագրի պատճենը:<br><br>**Փաստաթղթերը ներկայացնել անձամբ** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 11) սահմանված կարգով նախապատրաստում և ներկայացնում է համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, աշխատակազմի քարտուղարի հրամանների, ոլորտին վերաբերող ծրագրային փաստաթղթերի, պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծեր, կազմում է համայնքի զարգացման ծրագրի համապատասխան ոլորտի նախագիծը և մասնակցում է համայնքային սեփականության գույքագրման աշխատանքներին,<br>12) կատարում է բաժնի ներքին գործավարության փաստաթղթերի շրջանառության և պահպանման աշխատանքներ,<br>13) մասնակցում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների կատարմանը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ այլ իրավական ակտերով նախատեսված այլ աշխատանքների կատարմանը,<br>14) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքների կատարմանը,<br>15) մասնակցում է համայնքային նշանակության մշակութային միջոցառումներին,<br>16) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:<br>Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ: | | |
| | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ | 3.1-43 | Բաժնի առաջատար մասնագետը՝<br>1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,<br>2) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.<br>3) հետևում է բաժնի պետի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին,<br>4) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,<br>5) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար,<br>6) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին,<br>7) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և | Բաժնի առաջատար մասնագետը՝<br>1) ունի առնվազն միջնակարգ կրթություն,<br>2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,<br>3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,<br>4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: | **Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝**<br>1) գրավոր դիմում /ձևը լրացվում է տեղում/.<br>2) առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը.<br>3) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.<br>4) հայտարարություններ /լրացվում են տեղում/. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան,<br>8)իր իրավասության սահմաններում կազմակերպում է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ենթակայության ճանապարհների վրա,<br>9) մասնակցում է երթուղիների աշխատաժամերի հստակեցման և կանոնավորման աշխատանքների կատարմանը.<br>10) կատարում է մոնիտորինգ համայնքի վատ կամ չսպասարկվող տարածքներում նոր երթուղիներ շահագործելու նպատակով,<br>11) երթուղիներում երթերը կանոնավորելու և վարորդների առողջական ու սանիտարահիգիենիկ վիճակը վերահսկելու նպատակով պարբերաբար կատարում է ստուգումներ երթակարգավորման և բուժզննման կետերում.<br>12) ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման համաձայն մասնակցում է համայնքային թափուր երթուղիների համար կազմակերպվող մրցույթների աշխատանքներին,<br>13)մասնակցում է բաժնի ներքին գործավարության փաստաթղթերի շրջանառության և պահպանման աշխատանքներին,<br>14) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:<br>Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ: | | 5) 1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի.<br>6) անձնագրի պատճենը:<br>**Փաստաթղթերը ներկայացնել անձամբ** |

| **Մրցույթն անցկացնելու օրը, ժամը, վայրը** | **Փաստաթղթերի ընդունումը** | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը** |
|---|---|---|
| **օրը՝ 2026 թվականի հուլիսի 24-ին<br>ժամը՝ 11:00<br>վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1<br>Գյումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ** | **Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել<br>Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (3-րդ հարկ. հեռ 0312-2-22-18, էլեկտրոնային փոստի հասցե՝ ashxatakazmgyumri@mail.ru),<br>ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից** | **2026 թվականի հուլիսի 1-ը ներառյալ** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«17» հունիսի 2026 թվականի №1841 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ ԹԱՂԱՄԱՍ 113 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 247.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1042-0014-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1248-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կազաչի պոստ թաղամաս 113 հասցեի հարևանությամբ գտնվող 247.3 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1042-0014-ից) տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Վ. Համբարձումյան փողոց, 5-րդ նրբանցք, 1 հողամաս**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«17» հունիսի 2026 թվականի №1842-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի №1772–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1262-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 10-ի №1772–Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի տանը, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝
**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ա. Շիրակացու փողոց, 1-ին փակուղի, 8/3 բնակելի տուն**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<17>> հունիսի 2026 թվականի N 1843-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ « ՀՈՒՍՈ ԱՌԱԳԱՍՏ- ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ԿՐԱՍՆԻԿԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Կարինե Կրասնիկի Մարկոսյանի 2026 թվականի հունիսի 16-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Հուսո առագաստ- մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ( այսուհետ՝ կազմակերպություն ) տնօրեն Կարինե Կրասնիկի Մարկոսյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի հունիսի 22-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 13 աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 22-ից մինչև հուլիսի 8-ը ներառյալ:
3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Կարինե Կրասնիկի Մարկոսյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության դաստիարակ Գայանե Ալբերտի Մելքոնյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Կրասնիկի Մարկոսյանին և Գայանե Ալբերտի Մելքոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** 2026-06-17 11:12:44 GMT+4 Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից mID **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

<<17>> հունիսի 2026 թվականի N 1844 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԹՌՌՆԻԿ ՄԱՆՈՒՇԱԿ -ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԵՎՀԱՏ ԼԵՎՈՆԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Արևհատ Լևոնի Տոնոյանի 2026 թվականի հունիսի 16-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Թռռնիկ մանուշակ- մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ( այսուհետ՝ կազմակերպություն) տնօրեն Արևհատ Լևոնի Տոնոյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2026 թվականի հունիսի 22-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 22-ից մինչև հուլիսի 24-ը ներառյալ:
3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Արևհատ Լևոնի Տոնոյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության դաստիարակ Անուշ Գուրգենի Մուրադյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արևհատ Լևոնի Տոնոյանին և Անուշ Գուրգենի Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2026-06-17 11:32:09 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** miD **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«17» հունիսի 2026 **թվականի** N 1845 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ծառայության ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ռուբեն Գևորգյան – Գյումրի համայնքի ղեկավարի օգնական,

